600.0340.29.11.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2016 թվականի №340Ա
քաղ. Երևան

«ԴԵՌՈՒՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ №ՏՍՕ-0027 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի №614Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ԴԵՌՈՒՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 17.1-րդ հոդվածի պահանջների խախտման՝ ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների չվճարման փաստի ուսումնասիրության նպատակով 2016 թվականի նոյեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) վերջինիս նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի մասին «ԴԵՌՈՒՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ ընկերություն) ծանուցվել է հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 1-ի №ԱԲ-2125Հ գրությամբ,

բ) վարչական վարույթի շրջանակում ընկերությունը փաստացի կատարել է ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժի վճարման պարտավորությունը,

գ) 2016 թվականի նոյեմբերի 15-ին ընկերությունը դիմել է հանձնաժողով՝ ռադիոհաճախականությունների օգտագործման №0652 թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով, և

հիմք ընդունելով օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը՝ հանձնաժողովը **որոշում** է.

1. 2016 թվականի նոյեմբերի 15-ից ուժը կորցրած ճանաչել՝
   1) «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից «ԴԵՌՈՒՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2004 թվականի հոկտեմբերի 26-ին տրամադրված շարժական ռադիոկապի ցանցի շահագործման №SUO-0027 թույլտվությունը,
   2) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 30-ի «ԴԵՌՈՒՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված №SUO-0027 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու մասին» №614Ա որոշումը:
2. Կարճել հանձնաժողովի կողմից 2016 թվականի նոյեմբերի 1-ից ընկերության նկատմամբ օրենքի 17.1 հոդվածի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով հարուցված վարչական վարույթը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
29 նոյեմբերի 2016թ.